

## Կարեն Մկրտչյան

### ՀՀ-ԻԻՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր - ՀՀ-ԻԻՀ մշակութային կապեր, հոգևոր մշակույթ, իսլամ-քրիստոնեություն, պատմամշակութային հուշարձանների վերականգնում, մզկիթ, եկեղեցի, փառատոն, ցուցահանդես, գրական կապեր, կրոնագիտական հայալեզու գրականություն:

ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև մշակութային կապերի պաշտոնական գործընթացը սկսվում է 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահի ԻԻՀ կատարած այցից հետո: Բանակցությունների արդյունքում երկու երկրների նախագահների միջև ստորագրվում է «Համատեղ հայտարարություն ՀՀ և ԻԻՀ միջև համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին» փաստաթուղթը<sup>1</sup>, որի 11-րդ հոդվածում նշվում է, որ կողմերը կրոնի, ռադիոհեռուստատեսության, կինոյի, արվեստի, գրականության, լրատվության, տուրիզմի և սպորտի բնագավառներում կապեր ստեղծելու ուղղությամբ միջոցներ կծեռնարկեն և կփոխանակեն համապատասխան խմբեր: Այս փաստաթուղթը դարձավ երկկողմ մշակութային համագործակցության պաշտոնապես հռչակված ծրագիր, թեև հետագա երկու տարիներին մշակութային կապերը համեստ էին, որը պայմանավորված էր արցախյան պատերազմով:

Մշակութային կապերի խորացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1994 թ. նոյեմբերի 27-ին Թեիրանում ստորագրված «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև մշակույթի, սպորտի, տուրիզմի և ՋԼՄ-ների բնագավառներում համագործակցության» համաձայնագիրը<sup>2</sup>, որով սահմանվեց ոլորտում համագործակցության օրակարգը:

Մշակութային համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխեց 2001-ից հետո, որը պայմանավորված էր 2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ԻԻՀ կատարած պաշտոնական այցով:

ՀՀ-ի և ԻԻՀ-ի համագործակցությունը մշակութային ոլորտում կարելի է բաժանել մի քանի ճյուղերի. ա.) հոգևոր-մշակույթ, բ.) թատրոն, գ.) գրականություն, դ.) արվեստ (նկարչություն, ցուցահանդեսներ և այլն):

Երկկողմ կապերի խորացման գործում զգալի աշխատանքներ է կատարում 2001 թ. գործող «Միիր» մշակութային ակումբը, որը հրատարակում է համանուն ամսագիր՝ Գ.

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց.1, գ.182, թ. 63:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, ց.11, գ.184, թ. 92:

Ասատրյանի խմբագրությամբ: «Միիր» ամսագիրը «Իրան-նամե» ամսագրի<sup>1</sup> ժառանգորդն է: 2005 թ. ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվել է «Պարսից լեզվի գրականության բարեկամների միություն»-ը, որը հայերեն և պարսկերեն լեզուներով հրատարակում է «Փարսիան» պարբերականը<sup>2</sup>:

Համագործակցությունը դրսևորվեց հոգևոր մշակույթի բնագավառում: ՀՀ-ն ԻԻՀ-ին սահմանակից միակ քրիստոնյա պետությունն է: ՀՀ-ԻԻՀ մշակութային հարաբերությունները վկայում են իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցության մասին: Քաղաքական առումով կրկնակի է արժևորվում այս իրողությունը՝ ա) չեզոքանում է Արևմուտքում տարածված ԻԻՀ-ի հակաքրիստոնեական քաղաքականության քարոզչությունը, ավելին՝ ստեղծվում է հակակշիռ, բ) ի դերն է ելնում ԱՀ-ի կողմից իսլամադավան աշխարհին հրամցվող այն հորինվածքը, թե իբր ԼԳ-ի հակամարտությունը հետևանք է հայերի կողմից դրսևորած կրոնական անհանդուրժողականության:

1994 թ. օգոստոսի 26-ին Երևանում էր գտնվում ԻԻՀ-ի պատվիրակությունը՝ մշակույթի և իսլամական կողմնորոշման հանձնաժողովի նախագահ, երկրի հոգևոր առաջնորդների խորհրդի անդամ Հոջաթ-օլ էսլամ Թաղավիի գլխավորությամբ՝ մասնակցելու Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հուղարկավորությանը<sup>3</sup>: Հիշյալ պատվիրակությունը միակն էր իսլամական աշխարհից և վկայում էր կողմերի հոգևոր կառույցների փոխադարձ հարգանքի մասին: Նշելի է, որ 1999 թ. հուլիսի 8-ին ՀՀ նախագահին հանդիպեց ԻԻՀ-ի ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների գլխավոր վարչության պետ Ֆ. Դովլաթավադին: Վերջինս Ռ. Քոչարյանին հանձնեց ԻԻՀ-ի նախագահ Մ. Խաթամիի ցավակցական ուղերձը Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի մահվան կապակցությամբ<sup>4</sup>:

Կողմերի հոգևոր-մշակութային համագործակցությունը նշանավորվեց պաշտամունքային հուշարձանների վերադարձման և վերականգնման աշխատանքներով: 1995 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ Երևանի Կապույտ մզկիթի վերանորոգման և վերակառուցման մասին<sup>5</sup>: Ի կատարումն այդ հուշագրի՝ սկսվեցին մզկիթի վերանորոգման աշխատանքները, որոնք իրականացվում էին իրանական կողմի կապիտալ ներդրմամբ և երկու երկրների մշակութային

<sup>1</sup> «Իրան-նամե» արևելագիտական հանդեսը հրատարակվել է Երևանում 1993 թ.-ից և անդրադարձել Մերձավոր և Միջին Արևելքին, Կենտրոնական Ասիային, Հին Արևելքին, հայագիտությանը և մշակույթին վերաբերող հիմնահարցերին:

<sup>2</sup> Տե՛ս Փարսադանյան Վ., Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, 13 մարտի, 2012 թ., Եր., 2012, էջ 103:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 242, թթ. 27-31:

<sup>4</sup> Տե՛ս «Ապագա», երկշաբաթաթերթ, Թեհրան, հուլիս, 1999, թիվ 7 (10), էջ 7:

<sup>5</sup> Կապույտ մզկիթը կառուցվել է 1765 թ. Երևանի խան Հուսեյն Ալիի օրոք և ունի 7000 մ<sup>2</sup> մակերես, 24 մ բարձրությամբ մինարեթ և 28 խուց: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո մզկիթը չի գործել և ծառայել է որպես Երևանի պատմակենդանաբանական թանգարան:

փորձագետների հսկողության ներքո: 1999 թ. ամռանը Երևանում հիմնվեց ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոն: ԻԻՀ-ի մշակույթի և իսլամական կապերի գրասենյակի ու «Մոսթազաֆան և Ջանբազան» հիմնադրամի տնօրենների որոշմամբ մզկիթի պահպանման պարտականությունը փոխանցվեց ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնին<sup>1</sup>: Մզկիթում կազմակերպվում են կրոնական արարողություններ, պարսկերենի դասընթացներ: Մզկիթում գործում է տեղեկատվական գրասենյակ: 1998 թ. աշնանը ֆոնդերի համալրման աշխատանքները սկսեց մզկիթի գրադարանը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1999 թ. գարնանը: Գրադարանում պահվում է ավելի քան 7000 միավոր գիրք<sup>2</sup>:

2003 թ. հոկտեմբերի 1-ին «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի 32-րդ ընդհանուր ժողովում ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը իր խոսքում գոհունակություն հայտնեց ԻԻՀ-ի կառավարությունից քրիստոնեական հուշարձանների պահպանությանն ուղղված համագործակցության համար<sup>3</sup>: ԻԻՀ-ի իշխանությունները վերանորոգել են Արևմտյան Ատրպատականի Կարիսի, Ղարադաղի և Գուլփարչինի հայկական եկեղեցիները<sup>4</sup>:

2000 թ. հուլիսի 18-ին ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ռ. Շառոյանը թեհրանում հանդիպում է ԻԻՀ մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարին: Վերջինս նշել էր, որ իր երկիրը հատուկ ուշադրություն է դարձնում Իրանի եկեղեցիների վերանորոգմանն ու պահպանությանը: Այդ ծրագրում իրենց առանձնահատուկ տեղն ունեն ԻԻՀ-ի հյուսիսում գտնվող Ս. Ստեփանոսի և Ս. Թադեի վանքերը<sup>5</sup>: ԻԻՀ-ը ՀՀ-ի հարևան չորս երկրներից միակն է, որ պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերում իր տարածքում գտնվող հայկական եկեղեցիներին՝ հարկ եղած դեպքում վերականգնելով դրանք: Ս. Թադեի վանքը, որպես պատմամշակութային արժեք, ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում, իսկ 2004 թ. մեծ շուքով նշվել է Ս. Թադեի վանքի ուխտագնացության կազմակերպման 50-ամյակը<sup>6</sup>:

ԻԻՀ-ի կառավարությունը ստանձնել է հայերի կառուցած մշակութային ու կրոնական հուշարձանների նորոգման պատասխանատվությունը և օժանդակում է դրանց պահպանության գործին<sup>7</sup>: Միայն Սպահան քաղաքի Նոր Ջուղա հայկական թաղամասում 13 գործող եկեղեցիներ կան<sup>8</sup>: 2001 թ. ՀՀ նախագահի այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվեց «Համաձայնագիր հուշարձանների պահպանման բնագավառում համագործակցության վերաբերյալ»:

<sup>1</sup> Տե՛ս Երևանի կենտրոնական (Կապույտ) մզկիթ, Եր., 2004, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 8:

<sup>3</sup> Տե՛ս Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, Ելույթների ընտրանի, Եր., 2009, «Սիվիլիթաս» հիմնադրամ, էջ 298:

<sup>4</sup> Տե՛ս Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Թեհրան, 2001, էջ 47:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 6, գ. 67, թ. 42:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, ց.11, գ.182, թթ. 50-51:

<sup>7</sup> Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 199:

<sup>8</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 25:

ԻԻՀ-ի նախագահ Մ. Խաթամիի կոչը՝ 2001 թ. հռչակել քաղաքակրթությունների երկխոսության տարի, մեծ արձագանք գտավ հայ հոգևոր-մշակութային կյանքում, քանզի այդ թվականին մեծ շուքով նշվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Այդ պատճառով ԻԻՀ-ի կառավարությունը, ցանկանալով Հայ Առաքելական եկեղեցու օրինակով ցուցադրել երկու կրոնների՝ իսլամի և քրիստոնեության միջև երկխոսության հնարավորությունը, Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդին հուշել էր հնարավորինս բարձր շուքով տոնել այդ հիշարժան տոնը և Անթիլիասից հրավիրել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսին: Նշված տոնակատարությունները ղեկավարելու նպատակով Վեհափառ Հայրապետը 2001 թ. հուլիսին ժամանեց Թեհրան: Հայտնի է, որ Արամ Ա կաթողիկոսը մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրոնական երկխոսության համոզված կողմնակիցներից է ու աջակիցներից: Հուլիսի 16-ին Արամ Ա կաթողիկոսը մասնակցեց «Մահմեդականների ու հայ քրիստոնյաների համակեցությունը» թեմայով գումարված սեմինարի բացմանը: Արամ Ա Կաթողիկոսը հանդիպեց նաև բարձրաստիճան հոգևորականների և ԻԻՀ-ի նախագահի հետ<sup>1</sup>: Մ. Խաթամին նշել էր, որ ինքը հպարտ է լինել իրանցիների նախագահը, այդ թվում սիրելի հայերի<sup>2</sup>: Արամ Ա կաթողիկոսի առաջարկով եկեղեցիների համաշխարհային խորհուրդը 2000 թ. կրոնական երկխոսության հատուկ հանձնաժողով է ստեղծել, որի իսլամադավան միակ ներկայացուցիչը Մերձավոր Արևելքում ԻԻՀ-ից է:

1999 թ. մայիսին Հայաստանի «Արտ-13» հեռուստաընկերությունը «Քրիստոնեության 1700-ամյակ»-ի շրջանակներում Իրանի հայ համայնքի մասին ֆիլմի նկարահանումները կատարեց Թեհրանում, Սպահանում, Թավրիզում և Ուրմիայում<sup>3</sup>:

2003 թ. հունիսի 9-ին ՀՀ ԳԱԱ-ում «Իմամ Խոմեյնու քաղաքական, մշակութային, հասարակական և կրոնական աշխարհայացքը» թեմայով բացվեց գիտաժողով<sup>4</sup>: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ գիտաժողովի մասնակիցներին հղած ուղերձում միջոցառումը կարևորվում էր կրոնական երկխոսության, ազգային շահերի հետապնդման և հայ-իրանական հարաբերությունների տեսանկյունից:

Հայ Կաթողիկե եկեղեցին զգալի աշխատանք կատարեց ԻԻՀ-ում իր անշարժ գույքի վերադարձման համար: Այդ նպատակով 2000 թ. սեպտեմբերին Հռոմի եպիսկոպոսական ժողովին Իրանում Հայ կաթողիկե թեմական խորհրդի նախագահ ընտրված Նշան վրդ. Կարաքեհյանը 2001 թ. փետրվարի 28-ին մեկնում է ԻԻՀ և ստանձնում Հայ կաթողիկե թեմի առաջնորդի պաշտոնը: Յոթանասունն անց տարիքում,

<sup>1</sup> Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն», 2013, էջ 146:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 6, գ. 67, թ. 41:

<sup>3</sup> Տե՛ս «Ապագա» ամսագիր, Թեհրան, մայիս-հունիս, 1999, թիվ 5-6 (8-9), էջ 16:

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 10 հունիսի, 2003:

չինանալով պարսկերեն, նա Մազանդարանի, Սպահանի և Թեհրանի դատարաններում պայքարեց և վերադարձրեց Հայ կաթողիկե թեմի մեծ թվով կորսված կալվածքները<sup>1</sup>:

2005 թ. օգոստոսի 23-28-ը Թավրիզի թեմական առաջնորդարանի հրավերով ՀՀ Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվիրակությունը մեկնեց ԻԻՀ ծանոթանալու ԻԻՀ-ում գտնվող և կառավարության կողմից ֆինանսավորվող հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնման աշխատանքներին և գիտամեթոդական խորհրդատվությամբ օժանդակելու իրանցի մասնագետներին<sup>2</sup>: ՀՀ պատվիրակությունն այցելեց Ս. Ստեփանոսի և Ս. Թադեի վանական համալիրներ, Դարաշամբի, Խոյ քաղաքի, Մահրազան և Գրիս գյուղերի հայկական եկեղեցիներ, ինչպես նաև Ծործորի Ս. Աստվածածին խաչածև գմբեթավոր եկեղեցի (կառուցված 1298-1314 թթ.): Վերջինս 1995 թ. Մակուում արհեստական լիճ ստեղծելու պատճառով իրանահայ ճարտարապետ Վ. Առաքելյանի նախաձեռնությամբ ու միջոցներով տեղափոխվել է բարձրադիր վայր՝ Բարոն գետի մոտ<sup>3</sup>: 2000 թ. սկզբին Խոյ քաղաքից 8 կմ հեռավորության վրա գտնվող հայկական Մալիազան եկեղեցին գրանցվեց ԻԻՀ-ի պետական հուշարձանների ցուցակում<sup>4</sup>:

Այսպիսով, հոգևոր-մշակութային համագործակցությունը դրսևորվում է միջքաղաքակրթական երկխոսության պայմաններում և միմյանց պաշտամունքային կոթողների նկատմամբ կողմերի դրսևորած հոգատար վերաբերմունքով:

ՀՀ-ԻԻՀ մշակութային համագործակցության շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ: 1993 թ. ՀՀ պատվիրակությունը մասնակցեց Թեհրանում տեղի ունեցած միջազգային 11-րդ կինոփառատոնին: 1994 թ. փետրվարի 1-12-ը ՀՀ-ը կրկին մասնակցեց Թեհրանի միջազգային կինոփառատոնին, իսկ հունիսին ՀՀ-ում անցկացվեց իրանական կինոֆիլմերի փառատոն: Նույն թվականի հունիսի 17-ին Երևանի հանրապետական գեղագիտական կենտրոնի ցուցասրահում բացվեց «Նկարում են Իրանի երեխաները» ցուցահանդեսը, իսկ սեպտեմբերի 5-15-ը Երևանում կայացավ իրանական կինոֆիլմերի փառատոն, Երևանի տիկնիկային թատրոնը մասնակցեց Թեհրանի տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնին<sup>5</sup>:

1991 թ. Թեհրանի Հայ փորձնական թատրոնը Երևանում մասնակցեց սփյուռքահայ թատրոնների փառատոնին<sup>6</sup>: 1993 թ. Իրանի ազգային երգչախումբը՝ իրանահայ երաժիշտ Գ. Մովսեսյանի գլխավորությամբ հայրենիքում մասնակցեց երգչախմբերի

<sup>1</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, կազմող ժանետ Տ. Լազարյան, Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2012, էջ 58:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց.11, գ.183, թ. 80:

<sup>3</sup> Հասրաթյան Ս., Ծործորի վանք, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Խմբ. խորհ.՝ Հ.Մ Այվազյան և ուրիշ., Եր., 2002, «Հայկական հանրագիտարան», էջ 453-454:

<sup>4</sup> Տե՛ս «Լոյս» մշակութային և հասարակական երկշաբաթաթերթ, Թեհրան, թիվ 1, մարտի 15, 2000, էջ 4:

<sup>5</sup> Տե՛ս Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ.. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, 13 մարտի, 2012 թ., էջ 52:

<sup>6</sup> Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, /Խմբ.՝ Հովհ. Այվազյան, Ա. Սարգսյան և ուրիշ., Եր., 2003, Հայկական հանրագիտարան հրատ., էջ 260:

փառատունին<sup>1</sup>: 1993 թ. հիմնվեց Երևանի Միջին Արևելքի թանգարանը, որը գործում է Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ին կից<sup>2</sup>:

1995 թ. հոկտեմբերի 11-ին ԻԻՀ-ի մշակույթի և իսլամական առաջնորդության նախարար Մ. Միր-Սալիմը մասնակցեց Երևանի Կամերային երաժշտական տանը ԻԻՀ-ի մշակույթի շաբաթվա բացման արարողությանը, որին ներկա էին Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը, ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը, ՀՀ մշակույթի նախարար Հ. Մովսեսը: Ցուցադրված էին մետաքսագործ գորգեր, արծաթե սկահակներ, խճանկարային արվեստ, մանրանկարչություն և լուսանկարչություն: Ցուցահանդեսին ներկայացված էին բազմաժանր հրատարակություններ՝ գեղարվեստական, մշակութային, հայկական դպրոցների դասագրքեր: Միջոցառման ժամանակ երաժշտական կատարումներով հանդես եկան իրանցի երաժիշտներ Ռ. Բեհբահանին, Շ. Ֆայագին, Մ. Նեմաթին, Ս. Բանային, Մ. Դելնավազին, Չ. Յաղմին և Ջ. Սենբարին<sup>3</sup>:

Մշակութային համագործակցության հետ կապված՝ կարևոր է նշել, որ ԻԻՀ-ում մշակույթի ոլորտը ևս քաղաքականացված է: Մշակութային արժեքները գնահատելիս ԻԻՀ-ում գործում է որոշակի գրաքննություն, թույլատրելիություն՝ ըստ իսլամական կրոնական բարքերի: 1990-ական թթ. ընդհանուր առմամբ թույլ էր մշակութային համագործակցությունը: 1999 թ. հունվարի 22-ին հայ-իրանական կապերի հանձնաժողովի նիստին մասնակցած ՀՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար Ռ. Շառոյանը նշում էր, որ մշակութային կապերին աջակցում էր Իրանի հայ համայնքի «Արարատ» միությունը<sup>4</sup>: Իսկ ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գ. Ղարիբջանյանի խոսքով՝ ՀՀ-ից գալիս էին մշակութային խմբեր, նկարիչներ և մտավորականներ, որոնք շփվում էին միմիայն հայ համայնքի հետ և ԻԻՀ-ում հնարավորություն չէր ստեղծվում, որ իրանցիներն էլ հնարավորություն ունենան ծանոթանալու հայկական մշակույթին<sup>5</sup>: Չնայած ՀՀ-ում կազմակերպվում էին ցուցահանդեսներ, սակայն մշակութային առումով լուրջ քայլեր չէին կատարվում: Պատճառներից էին նշված թույլատրելիությունը, ինչպես նաև այն, որ իրանական կողմը ավելի շահագրգռված էր իր խմբերը ՀՀ ուղարկելու, քան հայկական համայնքներն ընդունելու:

2001 թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ԻԻՀ կատարած պաշտոնական այցից հետո որոշակի ակտիվություն նկատվեց մշակույթի ոլորտում: 2002 թ. փետրվարի սկզբին Հայաստանի ազգային պատկերասրահում ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ներկայացվեցին իրանական մանրանկարչության, մետաղագործության, փորագրարվեստի բացառիկ նմուշներ: Ցուցահանդեսը նվիրվել

<sup>1</sup> Տե՛ս Daneshname-e Iranian Armani, be qushesh: Zhanet d. Lazarian, Sharhale moshahire Armani, Hirmand, Tehran, 2009, p. 404.

<sup>2</sup> Տե՛ս Թաղևոսյան Ռ., Իրան (տեղեկատու), Եր., 2005, հեղինակային հրատ., էջ 56:

<sup>3</sup> Տե՛ս «Ապագա» ամսագիր, Թեհրան, 30 հոկտեմբերի, 1995, թիվ 2 (2), էջ 3-4:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց.11, գ.182, թ.14:

<sup>5</sup> Տե՛ս «Ապագա» ամսագիր, Թեհրան, օգոստոս-սեպտեմբեր, 1999, թիվ 8-9 (11-12), էջ 13:

էր Իսլամական հեղափոխության 23-րդ տարեդարձին<sup>1</sup>, իսկ 2003 թ. փետրվարի 3-ին Իսլամական հեղափոխության 24-րդ տարեդարձին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում բացված ցուցահանդեսում ներկայացվեց իրանցի Ֆ. Դորֆեշանի մանրանկարները և Ա. Ջավադյանի լուսանկարչական աշխատանքները<sup>2</sup>: Նման միջոցառումները կատարվում են «Ֆաջրի տասնօրյակ»-ի տոնակատարությունների շրջանակներում և այն երկրներում, որոնց հետ ԻԻՀ-ն ունի մշակութային կապեր:

2002 թ. հուլիսի 4-ին Թեհրանում Իրանի արվեստագետների տանը բացվեց Հայաստանի նորարար փորձառական արվեստի կենտրոնի 14 արվեստագետների ստեղծագործությունների երկշաբաթյա ցուցահանդեսը: Այն ներառում էր բազմաժանր ծրագիր՝ գեղանկարչություն, գրաֆիկա, դասական ավանգարդ երաժշտություն, վիդեո տարբերակով թատերական ներկայացում, լուսանկարչություն և այլն<sup>3</sup>:

Մշակութային կապերի զարգացման գործում անմասն չէր թատրոնը: 2000 թ. փետրվարին իրանական «Դահէ Ֆաջրի» փառատոնին ՀՀ-ից մասնակցեց «Կամերային» թատերախումբը: Փառատոնին ցանկություն էին հայտնել մասնակցել 35 երկրներ, որոնցից միայն տասը մասնակցեցին<sup>4</sup>: Մասնակցեց նաև ՀՀ-ի ֆիլիհարմոնիկ նվագախումբը՝ Լ. Ճգնավորյանի ղեկավարությամբ: Հրավիրող կողմի ցանկությամբ ՀՀ-ի ֆիլիհարմոնիկ նվագախումբը կատարեց Ա. Ֆիրդուսու «Շահնամե» («Արքայապատում») պոեմից «Ռոստոմ և Ջոհրաբ» հատվածը<sup>5</sup>: Հիշարժան է, որ առաջին անգամ ԻԻՀ-ում բեմի վրա մեներգեց կին երգչուհին:

Իրանահայ դերասան և ռեժիսոր Ա. Խեչումյանը 2000 թ. Երևանում բեմադրում է «Ապակե գազանանոցը» պիեսը պարսկերենով, իսկ 2001 թ. կրկին հայ հանդիսատեսի դատին է հանձնում դոկտոր Քերմանիի «Ուսաբեռ» ներկայացումը հայերենով: Առաջին անգամ Իրանի հայկական թատրոնի դերասանների մի խումբ բեմի վրա հանդես եկավ հայաստանցի դերասանների հետ համատեղ: Ա. Խեչումյանը 2004-2005 թթ. բեմադրեց Մ. Ռահմանյանի «Ժաննա դ'Արկը կրակի մեջ» և Է. Մեհրավարանի «Համլետի դերասանը» պիեսները, որոնք ներկայացրեց նաև «Արմնոնո» միջազգային փառատոնի ժամանակ: Խեչումյանը նաև կատարում է թարգմանություններ հայերենից պարսկերեն և՛ հակառակը: Նրա թարգմանություններից են՝ Ժ. Սեֆիյանի «Ես եմ՝ եկա», Գ. Խանջյանի «Դատավարություն», Ս. Կոսյանի «Գուցե փրկվենք», Գ. Դարֆիի «Սիավուաշը և Սուդաբեն», Ռ. Ամինիի «Ճենապակե ամուսինը», Ֆ. Ն. Քերմանիի

<sup>1</sup> Տե՛ս «Ալիք», օրաթերթ, 4 փետրվարի, 2002:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 4 փետրվարի, 2003:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 175:

<sup>4</sup> Տե՛ս «Լոյս» երկշաբաթաթերթ, Թեհրան, թիվ 1, 15 մարտի, 2000, էջ 13:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, թիվ 3, 30 ապրիլի, 2000, էջ 12:

«Ուսաբեռը», Ա. Ջահանգիրյանի «Համուն և Դարիա» ստեղծագործությունները<sup>1</sup>: 2000 թ. Խեչումյանը ՀՀ-ի և ԻԻՀ-ի թատրոնների համագործակցության ընդլայնման գործում իր հետևողական ջանքերի համար Հայաստանի թատերական գործիչների միության կողմից արժանացավ «Արտավազդ» մրցանակի:

2002 թ. մայիսին ԻԻՀ-ի Քերմանշահ քաղաքում տեղի ունեցած «Սուրեհ» թատրոնի միջազգային փառատոնին մասնակցեց Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը<sup>2</sup>: Հյուրախաղերը կազմակերպվել էին ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի տնօրեն Ա. Թալիբիի նախաձեռնությամբ: Միջազգային փառատոնին մասնակցում էին 14 երկրների թատերախմբեր: Ներկայացված Նիլ Սայմոնի «Երեք գունարած մեկ» ներկայացումը արժանացել է առաջին կարգի մրցանակի: Առաջին կարգի մրցանակ է շնորհվել նաև Սվետլանա Գրիգորյանին՝ կնոջ լավագույն դերի համար: 2000-2002 թթ. ԻԻՀ են այցելել 52 թատերական, սպորտային և մշակութային խմբեր: Միայն 2002 թ. հունվար-հունիս ամիսներին 6 թատերական խումբ է հյուրընկալվել ԻԻՀ-ում: 2002 թ. հունիսի 7-ին Երևանի կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ հայ-իրանական մշակութային շրջանակների ներկայացուցիչների հավաք<sup>3</sup>, որտեղ քննարկվում են 2002-2004 թթ. մշակութային միջոցառումների շրջանակում Երևանում անցկացվելիք «Հայաստան-Իրան քաղաքակրթությունների երկխոսություն» թեմայով միջազգային գիտաժողովի, ՀՀ ազգային արխիվում Իրանին վերաբերող փաստաթղթերի հրատարակման, «Արևելքը հայ կինոյում» համատեղ կինոփառատոնի անցկացման, «Իրանը հայ նկարիչների ստեղծագործություններում» ցուցահանդեսի և այլ միջոցառումներ: Չարենցի անվան ԳԱԹ-ի տնօրեն Հ. Բախչինյանը առաջարկեց կազմակերպել թանգարանի տրամադրության տակ գտնվող և չցուցադրված պարսկական ձեռագրերի ցուցահանդես, որոնցից շատերը գրվել են պարսից շահերի ձեռքով: 2002 թ. ԻԻՀ-ում անցկացվեցին Հայաստանի մշակույթի օրեր, իսկ 2003 թ.՝ ՀՀ-ում՝ Իրանի մշակույթի օրեր: 2002 թ. Իրանի բարձրագույն հոգևոր խորհրդի ֆինանսական աջակցությամբ պարսիկ և հայ կինեմատոգրաֆիստները նկարահանել են Հայոց ցեղասպանությանը նվիրված «Արարատ» վավերագրական ֆիլմը<sup>4</sup>:

2005 թ. տարբեր ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ մասնակցեցին երկու երկրներում կազմակերպված մշակութային միջոցառումներին. Երևանի ժողարվեստի թանգարանում կազմակերպվել է իրանցի նկարիչների ցուցահանդես՝ նվիրված Իսլամական հեղափոխության 26-րդ տարեդարձին, ՀՀ-ում՝ «Հայաստան-Իրան մշակութային կամուրջներ» համաժողովը, «Ոսկե ծիրան»

<sup>1</sup> Տե՛ս Daneshname-e Iranian Armani, p. 449.

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 8 մայիսի, 2002:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, 8 հունիսի, 2002:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, 29 հոկտեմբերի, 2002:

փառատոնին մասնակցել է իրանցի ճանաչված ռեժիսոր Քիառուսթամը, որի ֆիլմերը ցուցադրվել են փառատոնում, սեպտեմբերի 13-ին ԱՕՔՍ-ում (Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերություն - Армянское общество культурных связей с зарубежными странами, АОКС)՝ կազմակերպվել է Ֆ. Ազարբանիի «Մանրանկարչություն և զարդարվեստ» ցուցահանդեսը<sup>1</sup>:

**Նկարչության** ոլորտում ևս ակնառու էր համագործակցությունը իրանահայերի անմիջական մասնակցությամբ և միջնորդությամբ: 1995 թ. իրանահայ էդուարդ Պալասանյանը կնոջ՝ նկարիչ-բանաստեղծ Սոնյա Պալասանյանի հետ Երևանում հիմնել է Նորարար փորձառական արվեստի կենտրոն: 1995-2009 թթ. ՀՀ Մշակույթի նախարարության հանձնարարությամբ Պալասանյանները ՆՓԱԿ-ի ուժերով Վենետիկի համաշխարհային արվեստի բիենալեներում 8 անգամ շարունակաբար կազմակերպել են ՀՀ-ի տաղավարները<sup>2</sup>: Իսկ իրանահայ նկարիչ Մ. Գրիգորյանը /1925-2007/ 1990 թ. մոտ 5000 կտոր գործերից բաղկացած իր անզուգական հավաքածուով Երևանում հիմնում է «Սաբրինայի և Մարկո Գրիգորյանի Միջին Արևելքի» թանգարանը, որը Երևանի միակ միջինարևելյան թանգարանն է: Գառնի գյուղում հիմնած նրա գորգագործական արհեստանոցում վերականգնում էին հնամաշ գորգեր և գործում նորերը: Վերջիններիս էսքիզները նկարում էր Մ. Գրիգորյանը ուրարտական նախշերով<sup>3</sup>: 2004 թ. Իրանի արվեստագետների «Երեք սերունդ» ցուցահանդեսում իրանահայ նկարիչ Արմոնդ Այվազյանի /1964-2009/ գործերը ընտրվեցին Թեհրանի ժամանակակից արվեստների թանգարանի կողմից Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրվելու համար: Նրա «Խորհրդավոր ընթրիք» կտավը ներկայացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարան<sup>4</sup>:

2001 թ. ժ. Լազարյանը Թեհրանի ժամանակակից արվեստների թանգարանում կազմակերպեց մեծ ցուցահանդես՝ հայաստանցի և իրանահայ նկարիչների /Ս. Ավազյան, Հ. Մինասյան՝ Արտուշ/ մասնակցությամբ: Նա 2004 թ. Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպել է Իրանի երեք սերնդի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես<sup>5</sup>:

ՀՀ-ի Հ տեղեկատվական բացը լրացնելու նպատակով 2002 թ. հուլիսի 29-ին Երևանի Կապույտ մզկիթում բացվեց ԻԻՀ-ի ռադիոհեռուստատեսության լուրերի կենտրոնական բաժանմունքի գրասենյակը<sup>6</sup>: Այն նախատեսվում էր եթեր սփռել «Քրիստոնյա Հայաստան-1700» շարքի տոնակատարությունը, բայց ուշացավ: Հայկական ռադիոժամը ԻԻՀ-ի պետական ռադիոհեռուստատեսության

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց.11, գ.184, թթ. 92-93:

<sup>2</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 242:

<sup>3</sup> Տե՛ս Daneshname-e Iranian Armani, p. 370.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 384.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 118:

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 30 հուլիսի, 2002:

արտասահմանյան թղարկումների 31 բաժիններից մեկն է՝ կազմելով օրական ընդամենը 2.30 ժամ: 1996 թ.՝ առավոտյան հաղորդումների հեռարձակումից մեկ տարի անց սկսվեցին կեսօրվա եթերները, իսկ երեկոյան եթերները ավելացան՝ 30 րոպեից հասնելով 60-ի<sup>1</sup>:

Իրանահայ մտավորականները ակտիվորեն ներգրավված են հեղինակային գործերում: Ա. Հովասափյանը /1921-1997/ հեղինակ է «Մ. Խորենացի» /պարսկերենով/, «Ալիգուդարզի հայկական գյուղերը», «Սուրբ պատմություն» եռահատորյակի, «Իրանի հայ Ավետարանական եկեղեցու 100 տարվա պատմությունը» և մի շարք այլ գրքերի<sup>2</sup>: **Պատմագիտական արժեքավոր գրականություն է թարգմանվել** հայերենից պարսկերեն: 2000 թ. Լ. Գ. Մինասյանը Հ. Հովանյանցի /1828-1871/ գրաբարով գրված «Նոր Ջուղայի պատմություն» գիրքը թարգմանել է պարսկերեն, որում գրի է առնված Սպահանի հայության 258 տարվա պատմությունը՝ 1605-1863 թթ<sup>3</sup>: Իրանահայ Գ. Սարգսյանը՝ Սարգիսփուրը, հայերենից պարսկերեն է թարգմանել և տպագրել Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը»՝ 2001 թ., Կորյունի «Վարք Մաշտոցի»՝ 2002 թ., Փ. Բուզանդի «Հայոց պատմությունը»՝ 2004 թ., Ժ. Էլչիբեկյանի «Հայաստանը և Սելևկյանները»՝ 2003 թ.<sup>4</sup>: 2005 թ. ՀՀ ԳԱԱ-ի Պատմության ինստիտուտում դոկտորի աստիճան ստացած Լ. Մելքոնյանը իրանագետներ Գ. Ասատրյանի և Գ. Մելիքյանի հետ համատեղ ներկայացրել է պարսկերեն և անգլերեն 7 հատորանոց «Հայ-իրանական մշակութային ընդհանրություններն ու հարաբերությունները վաղ ժամանակներից մինչև մեր օրերը» գիրքը<sup>5</sup>:

Ժ. Լազարյանի կազմած «Իրանցի հայերի հանրագիտարան»-ի պարսկալեզու ընթերցողն առաջին անգամ հնարավորություն ստացավ ծանոթանալու՝ քաղաքականության, արվեստի, գիտության և այլ ոլորտներում լուրջ գործունեություն ծավալած իրանահայերի հետ: Հանրագիտարանը տպագրվել է ԻԻՀ-ի քաղաքակրթությունների երկխոսության կենտրոնի տնօրեն, ԻԻՀ-ի մշակութային և իսլամական առաջնորդության նախարար Ա. Մոհաջրանիի աջակցությամբ: Այն նվիրվել է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին, նաև ՄԱԿ-ի կողմից 2001 թ. քաղաքակրթությունների երկխոսության տարի հայտարարելուն: Հանրագիտարանը լույս է տեսել Թեհրանում 2003 թ. և բաղկացած է 25 բաժնից, որոնք վերաբերում են հայոց պատմությանը, աշխարհագրությանը, իրան-իրաքյան պատերազմում զոհված հայերին, հայտնի իրանահայերին և այլ թեմաների:

<sup>1</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 434:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 96:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 210:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 118:

Մշակութային հարաբերությունները նշանավորվեցին **գրական կապերով**: 2004 թ. հունիսին Հայաստանի գրողների միությունը, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը և ՀՀ-ում ԻԻՀ-ի մշակույթի կենտրոնը կազմակերպեցին «Հայաստան-Իրան գրական-մշակութային կամուրջներ-2004» ծրագիրը, որի շրջանակներում Երևան այցելեցին իրանցի գրողներ<sup>1</sup>:

Արժեքավոր **գեղարվեստական գրականություն է թարգմանվել**: 1990 թ. Երևանում հրատարակվեց «Մարգարտաշար» ժողովածուն, որտեղ ընդգրկված են 22 պարսիկ դասականների՝ Ռուդաքիից Ջամի, քառյակները: Ժողովածուի թարգմանչական կազմում էին Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Վ. Դավթյանը և այլք: Իսկ 2004 թ. հրատարակվեց «Պարսից պոեզիայի ընտրանի» ժողովածուն՝ Ս. Կապուտիկյանի թարգմանությամբ: Հիշատակության են արժանի հայերենից պարսկերեն կատարված մի շարք թարգմանություններ. 2002 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի պարսկերեն թարգմանության շնորհանդեսը<sup>2</sup>: Թարգմանության հեղինակն է ամերիկահայ Գ. Նուբարյանը: 2003 թ. հունիսի 9-ին հայ կանանց և հայոց հասարակական միությունների նախաձեռնությամբ Թեհրանի հայ ակումբի սրահում տեղի է ունեցել երեկո՝ նվիրված Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի 1000-ամյակին<sup>3</sup>: Պոեմը պարսկերեն է թարգմանել Սպահանի համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս Ա. Մաթյանը: Նա նաև հայերեն է թարգմանել «Հաֆեզի գազելներն» ու «Օմար խայամի քառյակները»:

Սարգիսփուրի պարսկերեն թարգմանությամբ 2003 թ. հրատարակվել է Նար-Ղոսի «Աննա» վիպակը<sup>4</sup>: Իսկ իրանահայ հայտնի գրող Խ. Խաչերը հայերեն է թարգմանել իրանցի նովելագիրների հատընտիրը՝ «Մետաքսի ձանապարհը»՝ 1996 թ., իրանցի գրողների 4 պատմվածք՝ «Կարմիր փողկապով տղամարդը»՝ 2002 թ., «7 պատմվածք» իրանական ժողովրդական հեքիաթները՝ 2003 թ., Ս. Հեդայաթի «Կենդանի թաղվածը»՝ 2003 թ.: Վահե Արմենը հրատարակել է ժամանակակից ձանաչված պարսիկ բանաստեղծներ Փունե Նեդայիի և Ռասուլ Յունանի հատընտիր բանաստեղծությունների հայերեն թարգմանությունը երեք հատորներով՝ «Վիրավոր պատը», «Գետ, որը կտավների միջից է հոսում» և «Դռանս բանալին արեգակի լույսն է»<sup>5</sup>: Ն. Միքայելյանը (Նորվանը) հայերեն է թարգմանել ժամանակակից պարսիկ բանաստեղծ Ահմադ Շամլուի «Ես ցավ եմ համընդհանուր» բանաստեղծությունների ժողովածուն և Բահրամ Բեյգայի «Յազդեթի մահը» ընտրանին՝ 1996 թ.<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 9 հունիսի, 2004:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, 26 հոկտեմբերի, 2002:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, 10 հունիսի, 2003:

<sup>4</sup> Տե՛ս Daneshname-e Iranian Armani, p. 248.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 250:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 251:

Մեծ է իրանահայ գրող Էդ. Հախվերդյանի ավանդը իրանական գրականությունը հայ ընթերցողին ներկայացնելու գործում: Նա հայերեն է թարգմանել Ս. Հեդայաթի, Ս. Չուբաքի, Հ. Գուլչիրի ստեղծագործությունները, որոնք տպագրվել են 1992 թ. «Կույր բու» ժողովածուում: 1996 թ. տպագրել է Ֆ. Ֆարոխզադեի բանաստեղծություններից թարգմանություններ՝ «Մեկ այլ ծնունդ», 2000 թ. Ս. Սեպեհրիի բանաստեղծություններից թարգմանություններ՝ «Կանաչ ծավալ»<sup>1</sup>:

Կրոնագիտական-աստվածաբանական հայալեզու գրականության հարստացման գործում կրկին մեծ է Էդ. Հախվերդյանի ներդրումը: Նա հայերեն է թարգմանել Իսլամի սուրբ գիրքը՝ «Ղուրանը»: ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի խորհրդական Ռզա Աթուֆին դեռ 2004 թ. թարգմանչին վստահել էր պատասխանատու գործը: Հայաստանի գրողների միությունում 2007 թ. փետրվարի 2-ին տեղի ունեցավ «Ղուրան»-ի հայերեն թարգմանության գրքի շնորհանդեսը: Թարգմանությունը կատարվել է պարսկերենից, սակայն գրքի ամեն մի էջում հայերենի կողքին բնագիրն է՝ արաբերենը: Ռ. Աթուֆիի խոսքով՝ թարգմանությունը կատարվել էր չափազանց բժախնդրորեն՝ թարգմանված ամեն մի 30 սուրա ուղարկվել է Թեհրան՝ լրացուցիչ ստուգման ու հաստատման<sup>2</sup>:

Իրանցի ընթերցողին հայ գրականությանը լավագույնս ծանոթացնելու գործում մեծ ավանդ ունի պարսիկ գրող, նվիրյալ հայագետ-թարգմանիչ Ահմադ Նուրիզադեն: Վերջինս աշխարհում առայժմ միակ ոչ հայ բանաստեղծն է, որ ստեղծագործում է և՛ պարսկերեն, և՛ հայերեն: Նրա հայագիտական ուսումնասիրություններից են հանրագիտարանային արժեք ունեցող պարսկերեն ստվարածավալ «Թարիխե ֆարհանգ Արմանեսթան» («Հայաստանի մշակույթի պատմություն», Թեհրան, 1997թ., 647 էջ) գիրքը<sup>3</sup>: Ա. Նուրիզադեն պարսկերեն հրատարակել է «Հայ պոեզիայի հարյուր տարին» (Թեհրան, 1990) բանաստեղծությունների և Ստ. Ջորյանի «Խնձորի այգին», «Անձրև» (1999) պատմվածքների ժողովածուները, Նար-Ղոսի «Ամալյա» վեպը (2001): Նուրիզադեն ստեղծագործում է նաև հայերեն, («Բարև Ձեզ, հայեր», բանաստեղծությունների ժողովածու՝ 2000 թ.)<sup>4</sup>: Բանաստեղծ հայասերը 2001 թ. պարզևատրվել է ՀՀ «Մ. Խորենացի» մեդալով:

Հրատարակվել են նաև կենսաբանությանն առնչվող պարսկերեն-հայերեն բառարաններ: Թավրիզի Իրան-Հայաստան առևտրական պալատի ներկայացուցիչ Ժ. Հ. Խոսրովյանը հրատարակել է «Պատկերազարդ բուսաբանական բառարան» (Թավրիզ, 1990 թ., ) և՛ «Պատկերազարդ կենդանաբանական բառարան» (2007 թ.)<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 441:

<sup>2</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 3 փետրվարի, 2007

<sup>3</sup> Տե՛ս Թաղևայան Ռ., նշվ. աշխ., էջ 52:

<sup>4</sup> Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 259:

<sup>5</sup> Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 117:

Իրանի հայ համայնքում տպագրվեցին նոր պարբերականներ: «Ապագա» հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդեսի առաջին և երկրորդ միացյալ համարները լույս են տեսել 2000 թ. ամռանը, Թեհրանում՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն<sup>1</sup>: «Լոյս» մշակութային և հասարակական երկշաբաթաթերթը (հայերեն և պարսկերեն բաժիններով) լույս է տեսնում 2000 թ. մարտից Թեհրանում, որն անդրադառնում է իրանահայ կյանքի հրատապ հարցերին<sup>2</sup>: Արտոնատերն ու գլխավոր խմբագիրն է Էդ. Բաղդասարյանը: 2001 թ. դեկտեմբերից Թեհրանում լույս է տեսնում «Հանդես» գրական-գեղարվեստական եռամսյա պարբերականը, որի խմբագիրն է Վ. Սուրենյանը<sup>3</sup>: Իսկ 1935 թ. Թեհրանում ստեղծված «Նոր էջ» գրական միավորումը երկար ընդմիջումից հետո 1999 թ. Երևանում լույս ընծայեց 24-րդ տարեգիրքը<sup>4</sup>: Բարերար Լ. Ահարոնյանի օժանդակությամբ 2000 թ. լույս է տեսնում «Լոյս» ամսաթերթը՝ հայերենով և պարսկերենով: Նա նաև մշակութային-հասարակական և գեղարվեստական «Յոյս» ամսագրի արտոնատերն ու պատասխանատուն է<sup>5</sup>:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը՝ եզրակացնում ենք.

1. ՀՀ-ԻԻՀ միջմշակութային հարաբերությունները պետք է դիտարկել որպես միջքաղաքակրթության՝ քրիստոնեության և իսլամի խաղաղ գոյակցության կեցութածն: Ըստ էության այն իր խորքում պարունակում է հայ ազգային քրիստոնեական արժեհամակարգի բարիդրացիությունը իսլամի շիա կրոնական ուղղությունը պետական գաղափարախոսություն և աշխարհայացք հռչակած աստվածապետական ԻԻՀ-ի հետ:
2. Միջքաղաքակրթական-միջմշակութային համագործակցության շրջանակներում ակնհայտ է նաև ԻԻՀ-ի հայ համայնքի որպես կամուրջի, կապող օղակի դերը և անմիջական մասնակցությունը տարբեր նախաձեռնություններում: Սակայն իրանցի արվեստագետները, հատկապես արվեստի, կինոյի ոլորտում քիչ են ներգրավված: Մյուս կողմից՝ նշելի է, որ հենց նույն միջպետական հարաբերությունների մակարդակով իրանահայ մտավորականությանը նպաստավոր հնարավորություն է ընձեռված իր գործունեությունը ծավալել նաև հայրենիքում, անմիջական կապեր հաստատել մշակույթի հայաստանաբնակ գործիչների հետ, կատարել փորձի փոխանակում:
3. ՀՀ-ԻԻՀ միջմշակութային համագործակցությունը պարբերաբար եղել է նաև երկու երկրների նախագահների ուշադրության կենտրոնում, այսինքն՝ չի սահմանափակվել լոկ համապատասխան պաշտոնյաների հանդիպումներով և հարցերի քննարկումով: Ավելին, համագործակցության նոր եզրեր ուրվագծվեցին գրականության, արվեստի

<sup>1</sup> Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 263:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 265:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 265:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 258:

<sup>5</sup> Տե՛ս Daneshname-e Iranian Armani, p. 177.

ոլորտներում, իսկ պաշտամունքի կոթողների վերադարձման և վերանորոգման փորձը խոստումնալից է:

**Карен Мкртчян, Культурное сотрудничество между Республикой Армения и Исламской Республикой Иран.** – В 1992-2005 гг. культурное сотрудничество между Республикой Армения и Исламской Республикой Иран, имело прогрессивную роль. Стороны сотрудничают в сфере искусства, театра, в вопросах реконструкции и возвратом храмов, духовных и культовых центров. В статье обсуждается то, что ценная историографическая и художественная литература переведена на персидский язык из армянского языка и наоборот.

**Karen Mkrтчyan, The cultural cooperation between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran.**- To sum up we can mention, that from 1992 to 2005, the cultural cooperation between The Republic of Armenia and Islamic Republic of Iran had progressive importance. The parties cooperate in the spheres of art, theater, in matters of reconstruction and return of spiritual temples and religious centers. The article specifically discusses that valuable historiographical and fiction literature has been translated into Persian from the Armenian language and vice versa.

**Կարեն Մկրտչյան** - պատմական գիտությունների թեկնածու – ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական, միջազգային և եկեղեցական կառույցների հետ կապերի վարչության Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և այլ հոգևոր կառույցների հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ: